ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 3, 1956 Биол. и сельхоз. науки

Ս. Գ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Տեխնիկական կուլտուրաների Հայկական գիտահետազոտական ինստիտուտում 1955 թվականին աշխատանք է տարվել եգիպտացորենի մի քանի սորտերի և հիբրիդների փորձարկման ուղղությամբ՝ Արարատյան դաշտավայրի պայմաններին հարմարված և բերքատու ձևերի հայտնաբերման նպատակով։

Փորձը դրվել է Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում։ Փորձարկման համար վերցվել են եգիպտացորենի հետևյալ սորտերը, հիբրիդները և հիբրիդային պոպուլյացիաները՝ Հոկտեմբերյանի տեղական պոպուլյացիա, Էջմիածնի կարծր սպիտակ, հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 5/51, հիբրիդ Վիր—42, հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 4/50, հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 10/53, հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 1/49, հիբրիդ Կրասնոդարսկայա 4, Ստերլինգ, հիբրիդ Վիր 50, հիբրիդ Կրասնոդարսկայա 5, Լիմինգ։

Ցանքը կատարվել է ապրիլի երկրորդ կեսին Էջմիածնում՝ Տեխնիկական կուլտուրաների Հայկական գիտահետազոտական ինստիտուտի կենտրոնական բազայում և Հոկտեմբերյանում՝ ինստիտուտի բամբակագործական զոնալ կայանում։ Փորձը դրվել է 4 կրկնողությամբ։ Յուրաքանչյուր կրկնողությունում ցանվել է՝ Էջմիածնում՝ 10, Հոկտեմբերյանում՝ 12 սորտ և հիբրիդ, որոնցից ամեն մեկն զբաղեցրել է Էջմիածնում՝ 43 քառ. մետր, Հոկտեմբերյանում՝ 61 քառ. մետր տարածություն։ Ցանքը կատարվել է քառակուսի-բնային եղանակով, 70 սմ միջշարային և միջբնային տարածություններով։ Բների մեջ բույսերի թիվը սահմանվել է, ելնելով փորձարկվող սորտերի և հիբրիդների վեգետացիայի տևողությունից. ընդ որում վաղահաս ձևերի դեպքում բներում թողնվել են ավելի շատ բույսեր, քան ուշահասների դեպքում։ Բույսերի խտությունը մեկ հեկտարի վրա տատանվել է 30000—50000, կախված սորտերից և հիբրիդներից։

Վաղահաս սորտերը, որոնք առաջացնում են համեմատաբար քիչ կանաչ մասսա, խիտ ցանքի դեպքում կարողանում են դրսևորել իրենց զարգացման պոտենցիալ հնարավորությունները և բարձր բերք տալ, իսկ ուշահաս սորտերը, որոնք առաջացնում են կանաչ մասսայի հսկայական կուտակում, լավ են զարգանում համեմատաբար փոքր խտության դեպքում։

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում ամենաբարձր բերքատվություն ունեցել է Վիր—42 միջգծային հիբրիդը։ Չնայած այս հիբրիդի յուրաքանչյուր բույսը համեմատաբար ցածր բերք է տալիս (Էջմիածնում՝ 148 գ, իսկ Հոկտեմբերյանում՝ 189,6 գ), բայց խիտ ցանքին հարմարված լինելու շնորհիվ, երկու շրջաններում էլ իր բերքատվությամբ զգալիորեն գերազանցում է փորձարկվող սորտերին, հիբրիդներին և հիբրիդային պոպուլյացիաներին։

Վիր—42-ը Էջմիածնի շրջանում բերքատվությամբ ստանդարտին գերազանցում է 51,6%-ով, իսկ Հոկտեմբերյանի շրջանում՝ 32,7%-ով։ Էջմիածնի շրջանում Վիր—42 հիբրիդից հետո առավել աչքի են ընկնում Կրասնոդարսկայա 4/50, Կրասնոդարսկայա 1/49 հիբրիդային պոպուլյացիաները և Ստերլինգ սորտը, որոնք յուրաքանչյուր հեկտարից ստացված կողրերի բերքով գերազանցում են ստանդարտին (Էջմիածնի կարծր սպիտակ) 8—14 ցենտներով։

Աղյուսակ 1

Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում փորձարկվող սորտերի ու հիբրիդների բերքատվությունը

Սորտերը և հիբրիդները	Էջմիածին			Հոկտեմբերյան		
	1 հեկտարից ստացված կողրերի կշիռը ց	հավելումը		1 հեկտարից ստացված կողրերի կշիռը ց	հավելումը	
Փորձարկման վայրը		բացարձակ	տոկոսներով		բացարձակ	տոկոսներով
Հոկտեմբերյանի տեղական պոպուլյացիա . . .	—	—	—	71,4	—	—
Էջմիածնի կարծր սպիտակ	44,4	—	—	—	—	—
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկ. 5/51	—	—	—	76,4	5	7,0
Հիբրիդ Վիր-42	67,3	22,9	51,6	94,8	23,4	32,7
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկ. 4/50	53,8	9,4	22,2	57,9	13,5	19,0
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկ. 10/53	48,5	4,1	9,2	78,6	7,2	10,1
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկ. 1/49	52,3	7,9	17,8	68,2	3,2	4,5
Հիբրիդ Կրասնոդարսկայա 4	41,5	3,9	7,0	82,4	11	15,4
Ստերլինգ	55,1	10,7	24,1	57,9	13,5	18,9
Հիբրիդ Վիր-50	43,9	0,5	1,1	75,7	4,3	6,0
Հիբրիդ Կրասնոդարսկայա 5	36,2	8,2	18,5	87,7	16,3	22,8
Լիմինգ	31,1	13,3	30,0	83,8	12,4	17,4

Հոկտեմբերյանի շրջանում բարձր բերքատու ձևեր են հանդիսացել Կրասնոդարսկայա 5, Կրասնոդարսկայա 4 հիբրիդները, Լիմինգ սորտը, Կրասնոդարսկայա 10/53 հիբրիդային պոպուլյացիան, որոնք Հոկտեմբերյանի տեղական պոպուլյացիայից բերքատու են 7—23 ցենտներով։

Չնայած Հոկտեմբերյանի տեղական պոպուլյացիայի բարձր բերքատվությանը (71,4), մեկ հեկտարից ստացվող կողրերի բերքով նա նշված սորտերից ետ է մնում 7—16 ցենտներով, իսկ Վիր—42 հիբրիդից՝ 23 ցենտներով։

Եգիպտացորենի սորտերի և հիբրիդների գնահատման համար կարևոր նշանակություն ունի բույսերի փարթամությունը։ Որքան հզոր ու փարթամ է բույսը, այնքան շատ է նրանից ստացվող կանաչ մասսայի քանակը։ Նկատի ունենալով այս, փորձի ընթացքում դիտողություններ են կատարվել բույսերի բարձրության, տերևների չափի և մի քանի այլ հատկանիշների ուղղությամբ։ Դիտողությունների արդյունքները ամփոփված են աղյուսակ 2-ում։

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ինչպես Էջմիածնի, այնպես էլ Հոկտեմբերյանի շրջանների պայմաններում փորձարկվող սորտե-

Աղյուսակ 2

Եգիպտացորենի փորձարկվող սորտերի և հիբրիդների հզորությունը 1933 թ.

Սորտերը և հիբրիդները	Փորձարկման վայրը	Էջմիածին						Հոկտեմբերյան					
		բույսերի բարձրությունը սմ-ով		տերևի		Վիթի վերգրավում	Ամբարման կնճռոտում	բույսերի բարձրությունը սմ-ով		տերևի		Վիթի վերգրավում	Ամբարման կնճռոտում
		հունձքով	առանց հունձքի	երկարությունը սմ-ով	լայնությունը սմ-ով			հունձքով	առանց հունձքի	լայնությունը սմ-ով	երկարությունը սմ-ով		
Հոկտեմբերյանի տեղական պոպուլյացիա		—	—	—	—	—	—	179,2	136,1	58,96	6,63	11,5	1,39
Էջմիածնի կարճ սպիտակ		183	146	57,99	7,25	11,1	1,46	—	—	—	—	—	—
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 8/81		—	—	—	—	—	—	165,1	128	51,28	6,53	10,7	1,37
Հիբրիդ Վիբ-42		185,1	145,8	55,5	7,74	12,5	1,41	143,6	110,6	49,84	6,5	11,6	1,22
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 4/50		175,4	142,5	55,7	8,13	10	1,46	140,8	106,6	48,45	6,47	11	1,26
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 10/53		175,9	141,6	54,4	7,9	12,6	1,53	171,9	132,4	52,78	6,85	11,3	1,35
Հիբրիդային պոպուլյացիա Կրասնոդարսկայա 1/49		210,4	167,5	58	8	13,3	1,56	177	133,2	57,21	7,36	11,3	1,47
Հիբրիդ Կրասնոդարսկայա 4		221,9	173,9	61,6	7,92	13,3	1,66	191,1	142,1	63,53	7,64	11,5	1,54
Սաերլինգ		208,1	165,9	58,49	7,98	12,4	1,66	185,3	142	57,12	6,65	11,1	1,41
Հիբրիդ Վիբ-50		199,9	153	58,97	7,45	13,5	1,61	182,8	139,4	59,67	7,1	11,7	1,45
Հիբրիդ Կրասնոդարսկայա 5		208,2	163	61,7	7,65	13,6	1,57	195,6	146	62,25	7,39	11,9	1,5
Լիմինգ		235	185,5	63,41	8	14,2	1,81	227,2	179,2	67,31	7,33	13,7	1,56

րից և հիբրիդներից ամենահզոր և կենսունակ բույսեր ունի Լիմինգը, որի ցողունի բարձրությունը, առանց հուրանի, Էջմիածնի շրջանում 179,2 սմ է, մինչդեռ նրանից հետո ամենափարթամ ձևի՝ Կրասնոդարսկայա 4 հիբրիդի ցողունի բարձրությունը Էջմիածնի շրջանում 173,9 սմ է, իսկ Հոկտեմբերյանի շրջանում՝ 142,1 սմ։ Լիմինգը գերազանցում է ծնացած սորտերին և հիբրիդներին նաև տերևների թվով, չափերով և ցողունի տրամագծով։

Էջմիածնի շրջանում կանաչ մասսայի մեծ կուտակում է տալիս նաև Կրասնոդարսկայա 1/49 հիբրիդային պոպուլյացիան, որը շրջանում հեռանկարային է դառնում միաժամանակ կողրերի բարձր բերք (հեկտարից 52 ցենտներ) ունենալու շնորհիվ։ Իր հզորությամբ նա հետ է մնում միայն Լիմինգ սորտից և Կրասնոդարսկայա 4 հիբրիդից, սակայն մեկ հեկտարից ստացվող կողրերի բերքով համապատասխանորեն գերազանցում է նրանց 21 և 11 ցենտներով (աղյուսակ 1)։

Պետք է նշել, որ Վիր-42 հիբրիդի բույսերի հզորությունը ցածր է վերը նշված սորտերի և հիբրիդների հզորությունից։ Այս հանգամանքը, սակայն, չի կարող նվազեցնել նրա արժանիքները, եթե նկատի ունենանք, որ հեկտարին ընկնող բույսերի ընդհանուր թվով գերազանցում է Լիմինգ սորտին և Կրասնոդարսկայա 1/49 հիբրիդային պոպուլյացիային մոտավորապես 40%-ով։

Հոկտեմբերյանի շրջանում կանաչ մասսայի կուտակման տեսակետից արժեքավոր են Կրասնոդարսկայա 4 և Կրասնոդարսկայա 5 հիբրիդները։ Սրանց հետագա փորձարկումը Հոկտեմբերյանի շրջանում նպատակահարմար է նաև նրանով, որ միաժամանակ ունեն կողրերի բարձր բերք։

Այսպիսով, 1955 թվականին ստացված նախնական տվյալներով, փորձարկման ենթարկված սորտերից ու հիբրիդներից բերքատվությամբ և բույսերի հզորությամբ առավել արժեքավոր են՝

1. Էջմիածնի շրջանում՝ Վիր-42 հիբրիդը, Ստերլինգ սորտը և Կրասնոդարսկայա 1/49, Կրասնոդարսկայա 4/50 հիբրիդային պոպուլյացիաները։

2. Հոկտեմբերյանի շրջանում՝ Վիր—42, Կրասնոդարսկայա 4, Կրասնոդարի 5 հիբրիդները. Լիմինգ սորտը, Կրասնոդարսկայա 10/53 հիբրիդային պոպուլյացիան։

Տեխնիկական կուլտուրաների Հայկական
գիտահետազոտական ինստիտուտ
գ. Էջմիածին։

С. П. СЕМЕРДЖЯН

ОБ ИТОГАХ ИСПЫТАНИЯ НЕКОТОРЫХ СОРТОВ И ГИБРИДОВ КУКУРУЗЫ В АРАРАТСКОЙ РАВНИНЕ

Резюме

В статье кратко дана характеристика некоторых сортов и гибридов кукурузы, выращенных в условиях Араратской равнины. Опыты проводились в условиях Эчмиадзина, на центральной базе Института

технических культур Армянской ССР и в Октемберяне, на зональной станции института. Всего испытывалось 12 сортов, гибридов, гибридных популяций и местных популяций.

Результаты предварительного испытания показывают, что из испытываемых сортов и гибридов более ценными являются:

1) в Эчмиадзинском районе: ВИР-42, гибридные популяции Краснодарская 1/49, Краснодарская 4/50 и сорт Стерлинг.

2) в Октемберянском районе: гибриды ВИР-42, Краснодарский-4, Краснодарский-5, сорт Лиминг, гибридная популяция Краснодарская 10/53.